

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵՍՆ  
ՄԷՋ ԵՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵՒՆԵՐ

ՊԵԹԱԾՈՅՆԻ ԵՒ ՊԵՐԿԸՆ ՔԱՌԻՆԴԻԻ ԾՈՒԽԹՐՈՒՆ  
ԵԿԵՂԵՑՅԱՇԽԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՉ

"Գ.- Չետրուար 19ին Սրբազան Հայրը գտնուած է Փէթըրսընի համայնքը:  
Այս ծուխը տարիներէ ի վեր ունեցած իր ծրագիրը գործադրելու  
համար՝ Ֆէյրլոն քաղաքին մէջ գտած է ընդարձակ հող մը, որուն  
վրայ կան երեք շէնքեր։ Այս կալուածը կարելի է գնել շատ  
նպաստաւոր գինով։ Սրբազան Հայրը, տեսնելով այդ կալուածը,  
գտած է որ շատ նպատակայարմար է, մանաւանդ որ Փէթըրսընի  
Երիտասարդ տարրը այդ կողմերը բնակութիւն հաստատած է,  
կարելի է նոր եկեղեցի մը շինել այդ գետինին վրայ։ Առաջնորդ  
Հայրը իր հաւանութիւնը տուած է այդ ուղղութեամբ Փէթըրսընի  
Ծխական նորհուրդին"

Մարտ 21, 1958

"Ե.- Ընդհանուր կարծիքներ փոխանակուել է ետք, ժողովս եզրակացուց  
թէ Պըրկըն Բառունդիի ծուխը պէտք է ընթացք տայ եկեղեցւոյ  
շինութեան, արդէն գնուած գետինին վրայ։ իսկ Փէթըրսընի ծուխը  
շանայ ծախնել Ֆէյրլոնի մէջ գնած կալուածը, եւ մէկ-երկու  
տարուան շը շանով նախաձեռնարկ չըլլայ նոր եկեղեցիի մը շինու-  
թեան, եւ եթէ անպայման ատիկա ընել Հարկ տեսնեն, այն ժամանակ  
թող գնեն գետին մը Փըսէ յթ Բառունդիի յարմար վայրի մը մէջ։  
Ուրիշ խօսքով, Պըրկըն Բառունդիի մէջ պէտք է շինուի թեմին  
ենթակայ միայն մէկ եկեղեցի ու ատիկա շինելու է Պըրկըն  
Բառունդիի ծուխը"

Ապրիլ 18, 1958

"Գ.- Նկատի ունենալով որ, աւելի քան տարիէ մ՞իվեր, Թեմական Խոր-  
հուրդի հաւանութեամբ, Պըրկըն Բառունդիի մէջ նորակազմ Հայ  
Առաքելական համայնքը ձեռնարկած է եկեղեցաշինութեան գործին։

Թեմական Խորհուրդս իմաստուն չի համարեր արտօնել որ Առաջնոր-  
դարանիս ենթակայ ուրիշ համայնք մը նոյն շը շանին մէջ նախա-  
ձեռնէ եկեղեցի կամ սրահ շինելու, մինչեւ որ Պըրկըն Բառունդիի  
համայնքին եկեղեցաշինական գործը իրականացման ճամբուն մէջ  
մտած չըլլայ։"

Մայիս 21, 1959

Թեմական Խորհուրդի այս ժողովներուն  
մէջ, Փէթըրսընի եւ Պըրկըն Բառունդիի ծուխերուն  
ներկայացուցիչները լսելէ ետք, տրուած են  
վերեւի որոշումները։